ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Կենսաբանական էքսկուրսիաների անցակցման մեթոդներ

ՂԵԿԱՎԱՐ՝ Աղավնի Մնացականյան

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Անուշ Վարդանյան

Աշտարակ 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

1. **ԳԼՈՒԽ 1.** ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……6
2. ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ և ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ……12
3. **ԳԼՈՒԽ 2.** ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ……13
4. **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……21**
5. **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……23**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը համարվում է աշակերտների դաստիարակության, կրթության զարգացման հիմանաքարը: Կրթված, տեղեկացված, զարգացած, բարոյահոգեբանական հատկանիշներով օժտված սերունդ ունենալու համար հարկավոր է ամուր պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը: 21-րդ դարի աշակերտները բավականին տեղեկացված գալիս են դպրոց, և ուսուցչի խնդիրն է դասն ավելի յուրահատուկ, հետաքրքիր ու բովանդակալից դարձնել: Էքսկուրսիան ուսուցչին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը: Այս ամենը նպաստում են երեխաների աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի շրջապատը, ամրապնդում են նրանց գիտակցական կարգապահությունը, սեր ու հարգանք են արթնացնում դեպի բնությունը, հոգատար վերաբերմունք են դաստիարակում մեր հայրենիքի,պատմամշակութային կոթողների նկատմամբ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգում առկա խնդիրներով և կենսաբանության հարցերով:Սովորողներին դեռ վաղ տարիքից պետք է սովորեցնել թանգարաններում և պատմամշակութային վայրերում իրենց պահելաձևի էթիկայի կանոններին:

Էքսկուրսիան ուսուցման պրոցեսում օգտագործվող մեթոդներից մեկն է, որի միջոցով աշակերտներն ամրապնդում են իրենց անցած տեսական գիտելիքները, ծանոթանում հայրենի բնությանը, մոտիկից տեսնում յուրաքանչյուր կենդանի օբյեկտը, իրն ու առարկան, հարստացնում գիտելիքների պաշարը և ընդլայնում մտահորիզոնը, ճանաչողական մեծ նշանակություն ունի էքսկուրսիան, որին դասը, լաբորատոր ու գործնական ւղարապմ պարապմունքները, իրենց կրթական մեծ նշանակությամբ հանդերձ, փոխարինել չեն կարող:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել դպրոցի դասագրքերում առկա կենսաբանության նյութերը էքսկուրսիաների միջոցով անցկացնելու պրակտիկան,բացահայտել դժվարությունները և մշակել դրանց արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումներ:

Նպատակին հասնելու համար ուսումնասիրության ընթացքում մեր առաջ դրել ենք հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել մեր հետազոտության հիմնախնդրին առնչվող առկա մասնագիտական գրականությունը և բացահայտել հիմնական սկզբունքները:
- Դիտարկել առարկայական ծրագրերն ու դասագրքերը և դրանք քննել մեր հիմնախնդրի տեսանկյունից:
- Պարզել կենսաբանության դասագրքերում առկա նյութերի ուսումնասիրության արդյունավետությունը էքսկուրսիաների միջոցով:
- Ամփոփել ուսումնասիրության արդյունքները և մշակել մեթոդական ցուցումներ:

Մեր ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդները.

- ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրություն,

- էքսկուրսիաների վարում և վերլուծություն,
- դիտում,
- ուսուցիչների շրջանում հարցախույզի իրականացում և արդյունքների վերլուծություն,

Ուսումնասիրության առարկան կենսաբանության դասն է և նրա իրականացումն ու ամրապնդումը էքսկուրսիաների միջոցով:

Հետազոտության օբյեկտը: Կենսաբանության նյութի յուրացմանը նպաստող էքսկուրսիաների կիրառման մեթոդիկան է:

Տեսական նշանակությունը: Մշակել ենք և տեսականորեն հիմնավորել կենսաբանության դասերի ընթացքում էքսկուրսիաների կիրառման մեթոդական ցուցումներ:

ԳԼՈՒԽ 1.

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու դաստիարակության, դրսևորման, զարգացման գործում կարևոր տեղ է զբաղեցնում կրթօջախը՝դպրոցը, որը սերտորեն փոխկապակցված է ծնող-հասարակություն կապի հետ, այս եռանկյունու ճիշտ գործելը դրական է ներգործում երեխայի բարոյահոգեբանությանը: Կրթօջախն անհնար է պատկերացնել առանց տարաբնույթ միջոցառումների:Տարաբնույթ միջոցառումներից է էքսկուրսիան:

«Էքսկուրսիա» բառը(excursio) լատիներեն նշանակում է կոլեկտիվ ուղևորություն կամ արշավ տեսարժան վայրեր՝ գիտական, կրթական նպատակով: Էքսկուրսիան լայնորեն տարածվել է 14-րդ դարի սկզբին ինչպես արտասահմանում,այնպես էլ Հայաստանում:

Ուսումնական էքսկուրսիաները ուսուցման կազմակերպման լավագույն ձևերից են:Առանձին մանկավարժ գիտնականներ էքսկուրսիան համարում են մեթոդ:Մենք գիտենք,որ էքսկուրսիայի ընթացքում կիրառվում են ուսուցման բացատրական-ցուցադրական,զրույցի,գործնական և այլ մեթոդներ:Հետևաբար ուսումնական էքսկուրսիան ուսուցման կազմակերպման ձև է:Ուսումնական էքսկուրսիաները հնարավորություն են ընձեռում աշակերտներին երևույթները, առարկաները, հուշարձանները տեսնել բնական վիճակում:

Էքսկուրսիաներն ըստ բնույթի լինում են՝



Նախորդող:Ծառայում են մեկ նպատակի համար.մինչ ուսումնական նյութի ուսումնասիրությունը աշակերտներին ծանոթացնել

այն, առարկաներին,պատմամշակութային վայրերին, որոնց շուրջ կառուցված է առաջիկայում անցնելիք նյութը:

Ուղեկցող էքսկուրսիաները կազմակերպվում են ուսումնասիրվող նյութին զուգընթաց՝ նյութն ավելի լավ ընկալելու,հասկանալի դարձնելու,իմաստավորելու նպատակով:

Հանրագումարային էքսկուրսիաները կազմակերպվում են տվյալ դասընթացի ավարտից հետո:Վերոնշյալ բնույթի բոլոր էքսկուրսիաները փոխկապակցված են,որոնց նպատակն է զարգացնել և ձևավորել աշակերտների կրթական, դաստիարակչական, հայրենասիրական կարողությունները:

Էքսկուրսիաներ կարելի է կազմակերպել ինչպես դասասենյակից դուրս, այնպես էլ դասասենյակում(ՏՀՏ-ների միջոցով)՝ տեսադասեր կազմակերպելով: Էքսկուրսիաներն օգնում են ուսուցչին աշակերտների մեջ սեր ու հետաքրքրություն արթնացնել դեպի բնությունը, դեպի մեր պատմական արժեքները, ձևավորել նրանց մտահորիզոնը, զարգացնել խոսքը և այլն:

Էքսկուրսիաների միջոցով մենք զարգացնում ենք աշակերտների դիտողունակությունը,ճանաչողական հետաքրքրությունները:

Աշակերտների մեջ ձևավորում ենք հումանիստական, հայրենասիրական զգացմունքներ, համագործակցային կարողություն:

Դաս-էքսկուրսիաները,որոնք կազմակերպվում են դրսում, ընթանում են յուրահատուկ ձևով: Փոխվում է դասի տեղը և անցկացման ձևը, խախտվում է դասի ընթացքը,աշակերտները թարմանում և աշխուժանում են, ինչն էլ նպաստում է հաղորդվող նյութի կայունյուրացմանը: Էքսկուրսիաների ժամանակ երեխաները, ուսուցչի օգնությամբ տեսնելով պատմամշակութային հուշարձանները,սկսում են հետաքրքրվել հայ ժողովրդի պատմական անցյալով, նրանց անցած դժվարին ուղիով:Նոր գիտելիքներ ստանալու ընթացքում աշակերտները սովորում են նոր բառեր, այսինքն՝ հարստանում է նրանց բառապաշարը: Էքսկուրսիաները

շարադրությունների միջոցով նպաստում են նաև աշակերտների գրավոր խոսքի զարգացմանը:

Էքսկուրսիան արտադպրոցական դաստիարակության ճյուղերից մեկն է: Արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է. Այն նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը: Էքսկուրսիայի հիմքում ընկած է ճանաչողական-զննական մեթոդը,որի ֆունկցիան ուսումնասիրվող օբյեկտը բնական վիճակում ընկալելն է:

Մանկավարժ հոգեբան Հովարդ Գարդները գտնում էր, որ մարդը գիտելիքներ ձեռք է բերում ողջ կյանքի ընթացքում, սակայն մտածողության այս կամ այն տեսակով օժտված է լինում ի ծնե:Մարդիկ տարբերվում են իրարից մտածելու, ստացած տեղեկատվությունը նկատելու, ըմբռնելու ձևով: Գարդներն առանձնացնում է մտածողության հետևյալ տեսակները՝խոսքային, տրամաբանական (հատուկ են ավանդական դպրոցին)տեսողական, երաժշտական, մատնաշարժողական (առնչվում են արվեստի հետ), միջանձնային, ներանձնային: Այս բոլորն էլ խիստ անհրաժեշտ են էքսկրուրսիա կազմակերպելու ընթացքում:

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ և ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ուսումնական նպատակով անցկացվող էքսկուրսիաները լինում են 4 տիպի.

1. նոր նյութի հաղորդումը նախապատրաստող
2. նոր նյութի հաղորդման
3. անցած նյութի ամրապնդման
4. անցածի կրկնության ու ամփոփման

[1]Տե՛ս՝ Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Լույս, Ե.,1980, էջ 231:



Եթե դասագրքի նյութը համառոտ է և դժվար է յուրացվում, ցանկալի է կազմակերպել էքսկուրսիաներ ինչպես դասասենյակում(տեսադասերի միջոցով),այնպեսէլ դասասենյակից դուրս, որպեսզի նոր նյութը լավ ըմբռնեն:

Անցածի կրկնության կամ ամփոփման նպատակ հետապնդող էքսկուրսիաներն անցկացվում են այլ ձևով: Այս էքսկուրսիաները կարելի է անցկացնել առանձին թեմաների ուսումնասիրությունից հետո, որպեսզի ամփոփեն անցածը: Այսպիսի ամփոփումից հետո աշակերտների հիշողության մեջ թարմացվում է անցածը, և դաս-էքսկուրսիան ավելի օգտակար և արդյունավետ է ստացվում:

Օրինակ՝ եթե նյութը դասագրքում շատ համառոտ է տրված, և այն չի բավարարում տվյալ հասկացության մասին բավականաչափ ընդարձակ գաղափար տալու,կամ անցած թեման այնքան բազմազան է, որ միայն բառային մտապատկերներով հնարավոր չէ ապահովել նրա յուրացումը,պետք է այդ նյութի ուսումնասիրումը կապել էքսկուրսիայի հետ: Այս դեպքում շատ օգտակար կլինի էքսկուրսիան անցկացնել նյութի նախնական ուսումնասիրությունից հետո, որպեսզի էքսկուրսիայի ընթացքում աշակերտները կոնկրետ կերպով տեսնեն այն, ինչ անցել են, համոզվեն իրենց անցածի ճշտության մեջ, դասարանում ստացած բառային մտապատկերները զուգակցվեն տեսողական մտապատկերների, զգայական ընկալումների հետ,և կամ ուսուցչի անցկացրած էվրիստիկ զրույցի միջոցով խորացնեն ու ընդարձակեն այն, ինչ սովորել են դասարանում՝ այդ ամենը կապելով կոնկրետ առարկաների և երևույթների դիտման հետ

Էքսկուրսիա կազմակերպելիս պետք է ուշադրություն դարձնել դրա նախապատրաստմանը, անցկացմանը և ամփոփմանը: Յուրաքանչյուր էքսկուրսիա կազմակերպելուց առաջ ուսուցիչը պետք է ունենա նպատակ, որին հասնելու համար նա պետք է մանրամասնորեն ուսումնասիրի տվյալ թեման, հաղորդակցվի համապատասխան մասնագետների հետ, լրացնի իր գիտելիքները տվյալ թեմայի վերաբերյալ, որպեսզի հստակ կարողանա պատասխանել այդ ընթացքում ծագած հարցերին: Նախնական ուսումնասիրությունից հետո ուսուցիչն իր պատկերացումների հիման վրա կարող է կազմել պլան, որում պետք է ընդգրկել հետևյալ հարցերը.

1. էքսկուրսիայի թեման

2. այն գիտելիքների համառոտ շարադրանքը, որ աշակերտները պետք է ստանան էքսկուրսիայի ընթացքում.

3. էքսկուրսիայի ընթացքի հակիրճ նկարագրությունը, շոշափվող հիմնական հարցերը, աշակերտներին տրվելիք առաջադրանքները.

4. էքսկուրսիայի վերջում անցկացվող ամփոփիչ զրույցի համառոտ բովանդակությունը:[2]

Ուսուցչի հիմնականխնդիրը էքսկուրսիայի ընթացքում այն է, որ աշակերտներին այնպիսի հարցեր առաջադրի,որ նրանք հետաքրքրվեն տվյալ պատմամշակութային հուշարձանով, ուշադիր լինեն, և էքսկուրսիան ավելի նպատակային լինի:

Աշխատանքներն ավարտելուց հետո հենց էքսկուրսիայի վայրում ուսուցիչը պետք է աշակերտներին հավաքի իր մոտ և ակտիվ երկկողմանի զրույցի միջոցով անցկացնի ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփում: Այդպիսի թռուցիկ ամփոփման համար կարելի է առաջադրել հետևյալ հարցերը.

- Ի՞նչ նպատակով էր կազմակերպվել էքսկուրսիան:

[2]Տե՛ս՝ Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Լույս, Ե., ,1980, էջ 232:

- Ով ինչպե՛ս է կատարել իրեն տրված հանձնարարությունը։
- Ի՞նչ առարկաներ կամ երևույթներ ուսումնասիրեցին էքսկուրսիայի ընթացքում։
- Ի՞նչն էր անհասկանալի էքսկուրսիայի ընթացքում։
- Ի՞նչ սովորեցին այդ էքսկուրսիայի ընթացքում և այլն։

Թեմայի ամփոփման կամ անցածի կրկնության ու ամրապնդմա նպատակով կատարվող էքսկուրսիաները նույնպես ամփոփվում են վերոհիշյալ ձևով։ Իսկ եթե էքսկուրսիան անցկացվել է դասանյութին նախապատրաստելու համար, թռուցիկ պետք է անդրադառնալ նաև էքսկուրսիայի նյութերին՝ ամփոփելով դրաարդյունքները։

Դասարանական ամփոփման ժամանակ առանց շտապելու կարելի է մանրամասնորեն քննարկել և վերլուծել էքսկուրսիայի ամբողջ ընթացքը։ Պետք է պատասխանել նաև էքսկուրսիայի ընթացքում ծագած այն հարցերին, որոնք անմիջականորեն կապված չեն թեմային, քանի որ նման զրույցի, հարց ու պատասխանի միջոցով զարգանում է աշակերտի աշխարհաճանաչողությունը։

Էքսկուրսիայի արդյունքների ամփոփման ձևերից մեկն էլ հավաքած նյութերը (առարկաները) խմբավորելով առանձին դասերի ուսումնասիրման նյութ դարձնելնէ։

Այսպիսով, էքսկուրսիայի նախապատրաստվելիս պետք է հստակորեն պատկերացնել, թե այն ինչ տիպի է լինելու, որպեսզի հնարավոր լինի այդ ուղղությամբ տարվող աշխատանքներին ճիշտ ընթացք տալ։ Էքսկուրսիան նպատակային է, եթե այն պատշաճ և ճիշտ է կազմակերպվում։

Էքսկուրսիայի ընթացքում աշակերտները բազմաթիվ առարկաներ և երևույթներ են տեսնում, որոնց միջոցով հարստանում է աշակերտների մտածողությունը, ընդլայնվում է աշխարհայացքը, նոր բառեր, դարձվածքներ և արտահայտություններ լսելով՝ ձևավորվում է բառապաշարը։

Էքսկուրսիաներին ուսումնական ծրագրով հատկացվում են որոշակի ժամեր,որոնց կատարումը պարտադիր է։ Ուսումնական էքսկուրսիաների կազմակերպումը ղեկավարում է դպրոցի տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալը՝ կազմակերպիչը։Նա է կազմում օրացույցային պլանը,ուր նշվում են,թե ո՛ր դասարանում, ե՛րբ

և ո՛ր առարկաներից են կազմակերպվելու էքսկուրսիաները։Սովորողները չեն կարող չմասնակցելուսումնական էքսկուրսիաներին՝ կախված ռասսայից, ազգային պատկանելիությունից կամ հաշմանդամությունից։ Յուրաքանչյուր աշակերտի ծնող կամ խնամակալ պետք է կրթական էքսկուրսիայի համար տրամադրի գրավոր թույլտվություն։

Այսպիսով, ցանկացած առարկայի դասավանդումն առավել արդյունավետ է,եթե դասի ընթացքում օգտագործվում են ցուցադրական-ուսուցողական համապատասխան նյութեր։ դասագրքեում զետեղված պատմական նյութերը ևս բացառություն չեն,որոնք ավելի տպավորիչ և հիշարժան դարձնելու համար ցանկալի է ամրապնդել էքսկուրսիաների միջոցով։ Էքսկուրսիան ուսումնական գործընթացի ձևերից մեկն է և պետք է լինի նպատակաուղղված. ունենա այնպիսի ուղղվածություն, որը կզարգացնի աշակերտների ճանաչողական ունակությունները։ Ճանաչողությունը մտածողության մեջ իրականության արտացոլման և վերարտադրության ընթացքն է։Հատկապես ճանաչողության առարկան ըմբռնելու ժամանակ մարդու գիտակցության մեջ առարկաներն ու երևույթները արտացոլվում են զգայարանների վրա նրանց անմիջական ազդեցության դեպքում։[4]Միաժամանակ դա անձի /աշակերտի/ և առարկայի /հուշարձան/ փոխգործողությունն է,որի ընթացքում որոշակի գիտելիք է յուրացվում աշակերտի կողմից։Էքսկուրսիայի ընթացքում ճանաչողությունն իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ՝ ակներև ընկալում /պատկերացում,զգայություն/-աշակերտի կողմից ստացվածպատկերացումների հիման վրա հասկացությունների ձևավորում։

Այսպիսով, էքսկուրսիաները զարգացնում են սովորողների բարոյական, գեղագիտական հատկանիշները։ Էքսկուրսիաների նպատակն է զինել աշակերտներին այնպիսի գործնական գիտելիքներով և ունակություններով,որոնք կձևավորեն արժեքային համակարգը (սեր հայրենիքի, նրա պատմության, մշակույթի նկատմամբ), նաև հետագայում կնպաստեն ինքնուրույն դատողություններ կատարելուն։

ԳԼՈՒԽ 2.

Էքսկուրսիաների կազմակերպումն ու արդյունավետությունը դպրոցում

Էքսկուրսիան ուսուցման պրոցեսում օգտագործվող մեթոդներից մեկն է, որի միջոցով աշակերտներն ամրապնդում են իրենց անցած տեսական գիտելիքները, ծանոթանում հայրենի բնությանը, մոտիկից տեսնում յուրաքանչյուր կենդանի օբյեկտը, իրն ու առարկան, հարցս- տացնում գիտելիքների պաշարը և ընդլայնում մտահորիզոնը, ճանաչողական մեծ նշանակություն ունի էքսկուրսիան, որին դասը, լաբորատոր ու գործնական ւղարապմ ունքները, իրենց կրթական մեծ նշանակությամբ հանդերձ, փոխարինել չեն կարող։

Էքսկուրսիայի ընթացքում անմիջական կապ է ստեղծվում շրջապատի միջավայրի հետ, հնարավոր պայմաններ են առաջանում ավելի մոտիկից ու խոր ճանաչելու աշակերտին, նրա բնավորությունը, հակումները, հմտությունները,հոգեբանությունը։

Կենսաբանություն ուսումնասիրելիս նպատակահարմար է աշկերտներին էքսկուրսիա տանել երկրաբանական թանգարան, որտեղ կան տարբեր դարաշրջանների բրածո օրգանիզմների քանդակներ, դրոշմվածքներ, վերակերտած կմախքներ։ Ընթացիկ էքսկուրսիաների համար լավագույն վայրեր են գիտահետազոտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում եղած ցուցահանդեսները կամ թանգարանները:

Էքսկուրսիաների տարբեր տիպերը հնարավորություն են տալիս ուսուցանվող թեմայի տեսականը զուգակցել գործնականին, անցած նյութն ավելի խոր ու բազմակողմ անի մատուցել աշակերտներին: նիստ անհրաժեշտ է ժամանակին կազմակերպել ծրագրով նախատեսված էքսկուրսիաները

Մեր առաջին «Կարևորո՞ւմ եք արդյոք էքսկուրսիաները, մասնավորապես մայրենիի դասագրքերի պատմական նյութերն ուսումնասիրելիս» հարցին բոլոր մասնակիցները՝ 20-ը (100%), պատասխանել են՝ այո՛, կարևորում են էքսկուրսիաները։Փակ հարց էր և մեր կողմից նշված պատասխանների մեջ կային նաև ոչ և այլ պատասխան տարբերակները, սակայն մասնակիցներից որևէ մեկը այդ պատասխաններից չէր ընտրել: Կարելի է եզրակացնել, որ դասվարները կարևորում են էքսկուրսիաները, մասնավորապես մայրենիի դասագրքերի պատմական նյութերն ուսումնասիրելիս:

Մեր առաջին «Կարևորո՞ւմ եք արդյոք էքսկուրսիաները, մասնավորապես մայրենիի դասագրքերի պատմական նյութերն ուսումնասիրելիս» հարցին բոլոր մասնակիցները՝ 20-ը (100%), պատասխանել են՝ այո՛, կարևորում են էքսկուրսիաները։Փակ հարց էր և մեր կողմից նշված պատասխանների մեջ կային նաև ոչ և այլ պատասխան տարբերակները, սակայն մասնակիցներից որևէ մեկը այդ պատասխաններից չէր ընտրել: Կարելի է եզրակացնել, որ դասվարները կարևորում են էքսկուրսիաները, մասնավորապես մայրենիի դասագրքերի պատմական նյութերն ուսումնասիրելիս:

Տրամագիր 2



Երրորդ՝«Պատմական նյութերն անցնելիս կազմակերպո՞ւմ եք էքսկուրսիաներ» հարցին բոլոր մասնակիցները 20-ը (100%) պատասխանել են, որ այո, կազմակերպում են էքսկուրսիաներ՝առաջնորդվելով՝ «Լավ է մեկ անգամ տեսնել,քան տասն անգամ լսել» ասացվածքով։Պատասխանների մեջ կային նաև ոչ և այլ պատասխան տարբերակները,սակայն մասնակիցներից որևէ մեկը այդ պատասխաններից չէր ընտրել: Այսպիսով, դասվարները մայրենիի պատմական նյութերն անցնելիս կազմակերպում են էքսկուրսիաներ:



Չորրորդ՝ «Ինչո՞վ է պայմանավորված էքսկուրսիաների արդյունավետությունը մայրենիի դասագրքերի դասանյութերն ուսումնասիրելիս» հարցին մասնակիցների մեծ մասը՝ 7-ը(35%), նշել է,որ էքսկուրսիայի արդյունավետությունը պայմանավորված է ուսուցչի ճիշտ աշխատանքով,2-ը(10%) կարևորում են աշակերտների մասնակցությունը,5-ը(25%) կարծում են,որ էքսկուրսիայի արդյունավետությունը պայմանավորված է թեմայի ճիշտ ընտրությամբ, մասնակիցներից 6-ը(30%) նշել են այլ պատասխան՝ պարզաբանելով,որ էքսկուրսիայի արդյունավետությունը պայմանավորված է և՛ աշակերտների մասնակցությամբ,և՛ թեմայի ճիշտ ընտրությամբ,և՛ ուսուցչի ճիշտ աշխատանքով: Այսպիսով, կարծում ենք,որ պատմական դասանյութերին համապատասխան էքսկուրսիաների արդյունավետությունըպայմանավորված էթե՛ աշակերտների մասնակցությամբ, թե՛ թեմայի ճիշտ ընտրությամբ, թե՛ ուսուցչի ճիշտ աշխատանքով: Այնուամենայնիվ, ուսուցչի պլանավորված և ճիշտ աշխատանքը լավ արդյունքի գրավականն է:



Հինգերորդ՝ «Ի՞նչ հաճախականությամբ եք կազմակերպում էքսկուրսիաներ» հարցին մասնակիցներից 2-ը(15%)՝ էքսկուրսիաներ կազմակերպում են ամիսը մեկ անգամ:Մասնակիցների մեծ մասը՝ 11-ը(55%), կիսամյակը մեկ անգամ է կազմակերպում էքսկուրսիա,մասնակիցներից 4-ը (20%) յուրաքանչյուր թեմայից հետո կազմակերպում են էքսկուրսիա:Մասնակիցներից միայն 2-ը(10%) նշել են այլ պատասխան՝ պարզաբանելով,որ էքսկուրսիա կազմակերպում են ըստ անհրաժեշտության ու հարմարության:

Այսպիսով,հարցաթերթիկի արդյունքներից ակնհայտ է,որ ուսուցչները չնայած արժևորում են էքսկուրսիաները,սակայն որոշ դժվարություններից ելնելով, ցավոք, հիմանկանում դրանք կիսամյակը մեկ անգամ են կազմակերպում:



Վեցերորդ՝ «Ի՞նչ էքսկուրսիաներ եք կազմակերպում /անցկացնում/» հարցին մասնակիցների մեծ մասը՝ 10-ը (50%), պատասխանել է, որ կազմակերպում է այց էքսկուրսիաներ,5-ը (25%)՝ տեսադաս էքսկուրսիաներ,5-ը(25%), իրավիճակից ելնելով, կազմակերպում են և՛ այց էքսկուրսիաներ,և՛ տեսադաս էքսկուրսիաներ:

Այսպիսով,այց էքսկուրսիաները ոչ միայն ճանաչողական գիտելիքների աղբյուր են, այլև աշակերտին որպես մարդ, որպես ընկեր և որպես անհատ բացահայտելու միջոց: Նաև աշակերտները մարդկային անմիջական շփման կարիք ունեն: Այո՛, ինչը տեսանելի և շոշափելի է,առավել հետաքրքիր է և ըմբռնելի, սակայն հաշվի առնելով արդի հնարավորությունները, ռիսկերը, վտանգները և հեռավորությունը՝երբեմն անհրաժեշտ է սահմանափակվել տեսադասերով

Տրամագիր 6



Յոթերորդ՝ «Պատմական նյութերն անցնելիս էքսկուրսիայի ո՞ր տեսակն էք նախընտրում: Ինչո՞ւ» հարցին մասնակիցներից 4-ը(20%) պատմական նյութերն անցնելիս նախընտրում են այց էքսկուրսիան, 6-ը(30%)՝ տեսադաս էքսկուրսիան:Մասնակիցներից 10-ը (50%) ընտրել են այլ պատասխան տարբերակը՝ հիմնավորելով,որ թեմայից և հարմարությունից ելնելով՝ նախընտրում են և՛ այց էքսկուրսիան,և՛ տեսադաս էքսկուրսիան:

Այսպիսով, ուսուցիչնեչն իրոք կարևորում են էքսկուրսիան և կարծում են՝ դասագրքերի նյութերի ուսումնասիրությունն էլ արդյունավետ և հետաքրքիր դարձնելու նպատակով կարելի է անցկացնել էքսկուրսիայի տեսակներից գոնե որևէ մեկը:

Ութերորդ՝ «Նշե՛ք այն դժվարությունները,որոնք առաջացել են էքսկուրսիաների միջոցով իրականացվող դասերի ընթացքում(ինչպես Ձեր, այնպես էլ աշակերտների դժվարությունները)» հարցի համար որևէ տարբերակ չի առաջարկվել. բաց հարց էր: Ներկայացնենք պատասխանները.

Ութերորդ՝ «Նշե՛ք այն դժվարությունները,որոնք առաջացել են էքսկուրսիաների միջոցով իրականացվող դասերի ընթացքում(ինչպես Ձեր, այնպես էլ աշակերտների դժվարությունները)» հարցի համար որևէ տարբերակ չի առաջարկվել. բաց հարց էր: Ներկայացնենք պատասխանները.

- երթուղայինի ընտրություն
- հեռավորություն
- դրամահավաքություն
- վերջին ժամանակաշրջանում մեծ դժվարություններ են առաջացել համաճարակի պատճառով:
- տեսադասեր անցկացնելու համար դպրոցները (դասասենյակները) չունեն համապատասխան սարքավորումներ:

Ուսումնասիրելով պատասխանները (մասնակիցների մեծ մասի նշած դժվարությունները)՝ կարելի է եզրակացնել, որ էքսկուրսիաների միջոցով մայրենիի դասերի պատմական նյութերի ուսումնասիրումը մի շարք դպրոցներում հաճախ չի իրականացվում, որը մեր կարծիքով պայմանավորված է ոչ թե ուսուցչի ցանկությամբ, այլ մի շարք այլ հանգամանքներով: Ողջունելի է նաև, որ մասնակից ուսուցիչների մի մասը պատասխանել է, որ դժվարություններ չունի:

Էքսկուրսիա դեպի անտառ,

Որոշեցինք 11-րդ դասարանի երեխաների հետ էքսկուրսիա կատարել դեպի անտառ։ Կազմեցինք հարցաշար և անցկացրեցինք հարցում։ Էքսկուրսիայի և զբոսանքի ժամանակ անցկացվող զրույցները, բացի իմացական գիտելիքներից, երեխաների մետ ձևավորեցին որոշակի վերաբերմունք բույսերի և կենդանիների նկատմամբ։ Էքսկուրսիայից առաջ կազմեցի հարցաշար, որին երեխաները պատասխանեցին շատ անկեղծ.

1. Մեր շրջապատի բույսերն ու կենդանիները ունե՞ն արդյոք պաշտպանության կարիք։
2. Կարևոր է՞ արդյոք էկոլոգիական դաստիարակությունը երեխաների համար։
3. Կարևոր է՞ անտառների պահպանությունը մարդկության համար։
4. Համարում ե՞ք ձեզ բավականին տեղեկացված էկոլոգիական խնդիրներին։
5. Կարևոր է՞ արդյոք անտառային կենսաբազմազանության պահպանումը մարդու և բնության համար։
6. Անտառային հրդեհները և մասսայական անտառահատումները կարող ոն վնաս հասցնել անտառներին։
7. Ի՞նչ կառաջարկեք անտառների կենսաբազմազանությունը պահպանելու համար։

- Առաջին հարցին դասարանի բոլոր երեխանները պատասխանեցին նույն ձևով. նրանց կարծիքով , այո, բոլոր կենդանիներն ու բույսերն ունեն պաշտպանության կարիք։
- Երկրորդ հարցին երեխաները պատասխանեցին այո, բայց չկարողացան բացատրել՝ ինչու՞։
- Երրորդ հարցին երեխանները պատասխանեցին՝ այո, անտառների պահպանությունը կարևոր է մարդկության համար։
- Չորրորդ հարցին պատասխանեցին՝ ոչ , բավականին տեղեկացված չեն, մի մասն էլ պատասխանեց՝ այո, լավ տեղեկացված է։

- Հինգերորդ հարցին երեխաների մի մասը չունեին հստակ պատասխան, մի մասն էլ պատասխանեց ՝ այո, կարևոր է անտառի բազմազանությունը մարդու և բնության համար։
- Վեցերորդ հարցին երեխաներից մի քանիսը պատասխանեցին՝ ոչ, մի քանիսը համոզված չէին իրենց պատասխանների մեջ, դասարանի մնացած երեխաների կարծիքով այս անտառահատումները և հրդեհները կարող են մեծ վնաս հասցնել անտառներին։
- Յոթերորդ հարցին մի քանիսը առաջարկեցին չկտրել ծառերը, չոչնչացնել անտառային բույսերին։ Մի մասն էլ առաջարկեց, որ անտառի կենսաբազմազանությունը պետք է պաշտպանվի բոլոր մարդկանց կողմից, մարդիկ պետք է ունենան էկոլոգիական որոշակի մշակույթ, որպեսզի ճիշտ վերաբերվեն անտառների կենսաբազմազանությանը։

Աշակերտների հետ անցկացրեցինք զրույց անտառների դերի և նշանակության մասին։ Հայաստանը համարվում է անտառներով աղքատ երկիր։ Հայաստանի տարածքի միայն 10-% է ծածկնած անտառներով։ Վերջին տարիներին մարդկանց կողմից անխնա կատարվող անտառահատումները բերեցին նաև անտառում ապրող շատ կենդանիների, թռչունների ոչնչացմանը։ Իսկ անտառի դերն ու նշանակությունը շատ մեծ է ամբողջ մարդկության համար։ Անտառները համարվում են երկրագնդի թոքերը, օդը հարստացնում են O 2-ով, արտադրում են ֆիտենցիտներ որոնք օդը մաքրում են հիվանդություններ առաջացնող բակտերիաներից։ Ինչքան շատ անտառներ ունենանք, այնքան օդը մաքուր կլինի։ Անտառում աճուն են շատ պտղատու և հատապտղատու ծառեր, ծառերի շատ տեսակներ, որոնք արժեքավոր փայտ ունեն։ Անտառը մարդկանց համար համարվում է եկամտի և ապրուստի միջոց։ Այդ նպատակով աշակերտները պետք է մասնակցեն անտառապահպան միջոցառումներին։ Մեր երկիրը պլանավորված պայքարում է անտառահատումների դեմ։ Օդի աղտոտվածությունը առաջացնում է նյարդային, սիրտ-անոթային, շնչառական համակարգերի, տեսողական օրգանների շատ հիվանդություններ։ Այդ պատճառով է, որ առողջարանները կառուցվում են այն վայրերում, որտեղ շատ անտառներ կան։ Աշակերտներին շատ հետաքրքրեցին անտառին վերաբերող խնդիրները, որոշեցին, որ փայտի փոխարեն կարելի է օգտագործել վառելիքի այլ

տեսակներ։ Օրվա վերջում երեխաները խնամքով մաքրեցին այն տարածքը, որտեղ իրենք նստել էին, աղբը հավաքեցին ու հեռացրեցին անտառից։ Զգուշորեն հանգցրեցին կրակը, որը իրենք էին վառել, որպեսզի չդառնա հրդեհների պատճառ։ Երեխաները գիտեին ինչպես պետք է պահեն իրենց բնության մեջ, լինեն պատասխանատու և ուշադիր ամեն ծառի ու թփի նկատմամբ։ Երեխաների մոտ արդեն կար ձևավորված էկոլոգիական մշակույթ։ Էքսկուրսիայից հետո երեխաները պատասխանեցին նույն հարցերին(հարցաշարին)

- Առաջին հարցին աշակերտները պատասխանեցին- այո՛։
  Նրանց կարծիքով կենդանիներն ու բույսերը ունեն պաշտպանության կարիք։
- Երկրորդ հարցին նույնպես պատասխանեցին- այո՛, Բայց արդեն նրանց կարծիքով էկոլոգիական կրթությունը անհրաժեշտ է երեխաների համար, որպեսզի իրենք ճիշտ վերաբերմունք ցույց տան անտառի բույսերին և անտառում ապրող կենդանիներին։
- Երրորդ հարցին աշակերտները պատասխանեցին- այո՛, Նրանց կարծիքով, անտառը մարդկանց համար և՛ սննդի աղբյուր է, և՛ ապրուստի միջոց, և՛ հանգստյան գոտի։
- Չորրորդ հարցին աշակերտները պատասխանեցին- այո՛, Նրանք լավ տեղեկացված են և նրանց կարծիքով այդ խնդիրները պետք է ավելի շատ մեկնաբանվեն։
- Հինգերորդ հարցին բոլորը պատասխանեցին – այո՛։ Նրանց կարծիքով օդը O_2 հարստացնողը, փոշուց և միկրոօրգանիզմներից մաքրողը անտառն է։
- Վեցերորդ հարցին աշակերտները պատասխանեցին- այո՛։ Նրանց կարծիքով հրդեհների պատճառով կարող են այրվել հարյուրավոր հեկտար անտառներ, ծխի պատճառով օդը կարող է աղտոտվել CO CO_2 գազերով, կոչնչանան մեծ թվով կենդանիներ, միջատներ, թռչուններ և այլն։
  Անտառահատուների պատճառով կարող է փոխվել նյութերի շրջապտույտը 1
- Անտառը պաշտպանելու համար երեխաները առաջարկեցին պայքարել ապօրինի անտառահատումների դեմ, հրդեհների ժամանակ անմիջապես հանգցնել կրակը, թույլ չտալ որ հրդեհը տարածվի։ Անտառների բարիքներից օգտվել չափավոր,

այնպես որ չխախտվի նյութերի շրջապտույտը անտառում, որը ի վերջո կարող է հասցնել անտառների աչնչացմանը։

Այսպիսով երեխաների մոտ սոցիալական հարցում անցկացնելուց հետո եկանք այն եզրակացության, որ երեխաները ձեռք բերեցին բավարար քանակի գիտելիք շրջակա միջավայրի , անտառի կենսաբազմազանության մասին։ Հասկացան անտառի դերն և նշանակությունը մարդկության և բնության համար։

Այնուհետև հարցում իրականացրեցի ուսուցիչիչների հետ։ Հարցմանը մասնակցեց 15 ուսուցիչ։

1. Կարևոր է՞ արդյոք էկոլոգիական դաստիարակությունը աշակերտների համար;
2. Համարում ե՞ք ձեզ տեղեկացված էկոլոգիական խնդիրներին;

3. Համարում ե՞ք արդյոք ձեզ բնության անբաժանելի մասնիկը;

4. Կարևոր է՞ անտառի կենսաբազմազանության պահպանումը բնության և մարդկության համար;

5. Ի՞նչ կառաջարկեք անտառների կենսաբազմազանության պահպանման համար;

1-ին հարցին ուսուցիչները պատախանեցին ----------այո;

2-րդ հարցին ----------այո;

3-րդ հարցին ----------այո;

4-րդ հարցին----------այո;

5-րդ հարցին ----------

ՈՒսուցիչների կարծիքով անտառի կենսաբազմազանության պահպանման խնդիրները շատ են։ Կենսաբազմազանության պահպանմանը պետք է մասնակցեն ո՛չ միայն ուսուցիչները և աշակերտները, այլև համայնքը և պետությունը։ ՈՒսուցիչները առաջարկեցին, որ անտառների բարիքների օգտագործումը պետք է լինի պլանավորված, պետական մակարդակով, որը կնպաստի անտառների և բնության պահպանությանը։ Այնուհետև հարցում իրականացրեցի մի խումբ բնագիտական առարկաների ուսուցիչների հետ։ Հարցմանը մասնակցեցին 4 ուսուցիչ։

1. Համարում ե՞ք արդյոք ձեզ բնության անբաժանելի մասնիկը։

2. Համարում ե՞ք ձեզ բավականին տեղեկացված էկոլոգիական խնդիրներին։

3. Ձեր դասավանդած առարկայի շրջանակում տալիս ե՞ք արդյոք էկոլոգիական դաստիարակություն։

4. Կարևոր է՞ էկոլոգիական դաստիարակությունը երեխաների համար։

5. Համարում ե՞ք արդյոք արտադասարանական պարապմունքները և էքսկուրսիաները էկոլոգիական դաստիարակության արդյունավետ միջոց։

1-ին հարցին ուսուցիչները պատասխանեցին այո՛

2-ին……այո՛

3-ին……այո՛

4-ին ……այո՛

5-րդին ուսուցիչների կարծիքով երեխաները էկոլոգիական գիտելիքներ ստանում են քիմիայի, ֆիզիկայի, աշխարհագրության, հայ գրականության և մյուս առարկաներից։ Այդ գիտելիքների պաշարը նրանց օգնում է արտադասարանական պարապմունքների ժամանակ ցուցաբերել ճիշտ վերաբերմունք բնությանը , գտնել ելքեր, անել առաջարկություններ էկոլոգիական խնդիրների վերաբերյալ։ Բոլոր ուսուցիչների կարծիքով էքսկուրսիաները և արտադասարանական պարապմունքները արդյունավետ են էկոլոգիական դաստիարակության համար։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ուսումնասիրելով կենսաբանության դասագրքերում առկա նյութերը՝ նկատեցինք, որ աշակերտների մեջ բնության նկատմամբ սեր ու հետաքրքրություն առաջացնելու նպատակով ուսուցիչներն իրոք կարևորում են էքսկուրսիան, և կարծում են՝ կենսաբանության դասագրքերի նյութերի ուսումնասիրությունը է՛լ արդյունավետ և հետաքրքիր դարձնելու նպատակով կարելի է անցկացնել էքսկուրսիայի տեսակներից գոնե որևէ մեկը:
2. էքսկուրսիաների արդյունավետությունը պայմանավորված է թե՛ աշակերտների մասնակցությամբ, թե՛ թեմայի ճիշտ ընտրությամբ, թե՛ ուսուցչի ճիշտ աշխատանքով.ուսուցչի պլանավորված և ճիշտ աշխատանքը լավ արդյունքի գրավականն է:
3. Այց էքսկուրսիաները ոչ միայն ճանաչողական գիտելիքների աղբյուր են, այլև աշակերտին որպես մարդ, որպես ընկեր և որպես անհատ բացահայտելու միջոց: Նաև աշակերտները մարդկային անմիջական շփման կարիք ունեն: Այո՛, ինչը տեսանելի և շոշափելի է,առավել հետաքրքիր է և ըմբռնելի,սակայն հաշվի առնելով արդի հնարավորությունները, ռիսկերը, վտանգները և հեռավորությունը՝ երբեմն անհրաժեշտ է սահմանափակվել տեսադասերով:
4. Տեսադաս էքսկուրսիաները դասն ավելի բովանդակալից և հետաքրքիր են դարձնում:Ցավոք, դպրոցների դասասենյակներն ապահովված չեն ժամանակակից տեխնոլոգիաներով,որոնց օգնությամբ հնարավոր կլինի յուրաքանչյուր պատմական թեմա(ինչպես նաև այլ թեմաներ) ուսումնասիրելիս միաժամանակ անցկացնել նաև կարճ տեսադասեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն,Մանկավարժ,Ե.,2005,456էջ:
2. Ասատրյան Լ. և այլք,Մանկավարժություն:Ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի համար,.Ե.,2017թ,336էջ:
3. Ասատրյան Լ.,Կարապետյան Ն.,«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա,Արտագերս,Ե.,2016,250էջ:
4. Գյուլամիրյան Ջ. Հ.,Խոսքի զարգացում,Զանգակ -97,Ե.,2014.,288էջ:
5. Գյուլամիրյան Ջ. Հ.,Մայրենիի ուսուցման մեթոդիկա,Զանգակ,Ե.,2018,344էջ:
6. Գյուրջինյան Դ.,Հեքեքյան Ն.,Մայրենի 3,ԷդիթՊրինտ,Ե.,2020,88էջ:
7. Գյուրջինյան Դ.,Հեքեքյան Ն.,Մայրենի 4,Ե.,ԷդիթՊրինտ, Ե.,2020,90էջ:
8. Թորոսյան Կ. և այլք,Ինչպես պլանավորել մայրենիի դասը 2,Ե.,Զանգակ,2016,436էջ:
9. Թորոսյան Կ. և այլք,Ինչպես պլանավորել մայրենիի դասը 3,Զանգակ,Ե.,2016,440էջ:
10. Թորոսյան Կ. և այլք,Ինչպես պլանավորել մայրենիի դասը 4,Զանգակ,Ե.,2016,442 էջ:
11. ՀՀ Պաշտոնական տեղեկագիր, Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը:
12. Պտրովսկի Ա.Վ.,Ընդհանուր հոգեբանություն, Լույս,1974, 280էջ:
13. Սարգսյան Վ. Ա, Այբբենարան,Մանմար,Ե., 2020,156էջ:
14. Սարգսյան Վ. Ա. և ուրիշներ, Մայրենի 2,Մանմար,Ե., 2020,88էջ:
15. Սարգսյան Վ. Ա. և ուրիշներ, Մայրենի 3,Մանմար,Ե., 2020,160էջ:
16. Սարգսյան Վ. Ա. և ուրիշներ, Մայրենի 4,Մանմար,Ե., 2020,176էջ:
17. Տեր-Գրիգորյանան Ա.Ե., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա. Ե.,Լույս,1980,564էջ:
18. Քյուրքչյան Ա.,Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Ուսուցչի ձեռնարկ,Ե., 2017,64էջ:
19. Քյուրքչյան Ա.,Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, Ուսուցչի ձեռնարկ,Ե., 2017,98էջ:
20. Քյուրքչյան Ա.,Տեր-Գրիգորյան Լ.,Մայրենի 1,Ե., 2018,64էջ: